

835

2-52

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՊԱՐՏԻՉ»-Ի — ԹԻԻ 4

Հրատարակիչ՝ Յ. ՄԱՐՍԵՂԵԱՆ

ՀԵՆՁԵԼ ԵՒ ԿՐԵԹԵԼ
(ՀԻՔԵԱԹ)

Քարգմանեց՝ Ս. ՎԵՅԻԿԵԱՆ



1939

835
2-52

830
7-52

30 JUL 2
-6 NO

ՄԱՏԵՆԱՇՆՐ «ՊԱՐՏԻՉ»-Ի — ԹԻԻ 4

Հրատարակիչ՝ Յ. ՄԱՐԱՇԼԵԱՆ

ՀԵՆՁԷԼ ԵՒ ԿՐԵԹԷԼ (ՀԷՔԵՆՐ)

Թարգմանեց՝ Ս. ՎԵՅԻԿԵԱՆ



1939

18.09.2013

1392

ՀԵՆՁԷԼ ԵՒ ԿՐԵԹԷԼ

Անտառին եզերքը մարդ մը կ'ապրէր իր կը-
նոջ և երկու զաւակներուն հետ: Անիկա արհեստով
աւելագործ էր: Զաւակներէն մին մանչ էր՝ Հենդէլ,
իսկ միւսը ազջիկ՝ Կրեթէլ անուանով:

Օր մը այր ու կին գործի գացած էին և երկու
մանուկները տունը առանձին պէտք էր աշխատէին:
Հենդէլ պէտք էր աւել շինէր, իսկ Կրեթել՝ գուլպայ
հիւտէր: Սակայն շուտով երկուքն ալ յոգնեցան աշխա-
տելէն:

— Օ՛ր, եթէ մայրիկը տուն չվերադառնայ,
ըսաւ Հենդէլ, ի՞նչ պիտի ընեմ, այնքա՛ն անօթի եմ.
սրբաթներէ է վեր հացէ զատ ուրիշ բան չենք կերած:



2902-2010

— Լռէ՛ և համբերութիւնս աւնեցիր, ըստ Կը-
րեթէ՛ւ, քեզի գողտնիք մը կ'ուզեմ հողորդել:

— Գողտնի՛ք, բացազանչեց Հենդէ՛ւ, անտա-
րակոյս ուտելիքի մասին է: Կարա՞գ, ձո՞ւ, կարկանդա՞կ,
ըսէ, գրեթէ մոռցած եմ անոնց համը:

— Լաւ ուրեմն, շատ ուրախ պիտի ըլլաս եթէ իս-
կայն իմանաս: Նայէ սա փարչին, մէջը թարմ կաթ կայ:
Այս օր դրացիներէն մին բերաւ: Մայրիկը երբ վե-
րադառնայ կաթնապուր պիտի եփէ անով:

Այս որ լսեց՝ Հենդէ՛ւ սկսաւ ցատկել սենեակին
մէջ ըսելով. «Կաթնապո՛ւր, կաթնապո՛ւր: Ուր որ
կաթնապուր կայ, հոն պիտի ըլլայ նաև Հենդէ՛ւ: Ի՞նչ
իւզոտ կաթ, տե՛ս որքա՛ն հաստ սեր կապեր է վրան:
Ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ կարենայի խմել քիչ մը:

— Ի՞նչ Հենդէ՛ւ, իսենթեցա՞ր միթէ, բացազանչեց
Կրեթէ՛ւ: Ձե՞ս ամչնար, շուտ մատդ դուրս հանէ, շտակեր
տղայ: Գնա՛ գործիդ, եթէ մայրիկին վերադարձին գոր-
ծերնիս վերջացուցած չըլլանք, վիճակնիս շատ վատ
պիտի ըլլայ:

— Կրկին աշխատի՞ր, պատասխանեց Հենդէ՛ւ,
ո՛չ, ո՛չ, ես չեմ ուզեր աշխատիլ. պարելը շատ աւելի
հաճելի է: Այս ըսելով սկսաւ գետարձաւի երգ մը երգել
և պարել անոր եղանակով: Կրեթէ՛ւ ինք ալ չլիմացաւ,
ստքի ելաւ ու սկսաւ պարել եղբօրը հետ:

«Ձեռքերովդ ծափ ծափ
Ոտքերովդ քրափ-քրափ».

Նախ աջ ոտքդ
Ապա ձախդ.
Իարձիք, հարեմ սխե՛ն»:

Արագ ու աւելի արագ սկսան պարել ու դառ-
նալ մինչև որ խելքի պտոյս ունեցան և երկուքը յան-
կարժ իրարու վրայ վար ինկան: Ճիշդ այդ վայրկեա-
նին դուռը բացուելով՝ մայրերնին ներս մտաւ:

— Հե՛նդէ՛ւ, Կրե՛թէ՛ւ, պտոսց նա, այս ի՞նչ
սարսափելի ազմուկ է:

— Հե՛նդէ՛ւն էր, ըստ Կրե՛թէ՛ւ, ան ուզեց
որ . . .

— Չայներնիդ կարեցէ՛ք, յանդիմանութեամբ
ըստ մայրիկը: Այսպէ՞ս կ'աշխատիք դուք, սրբելով,
իրարու վրայ գլորելով: Տեսնեմ որքա՛ն գործ էք լը-
ննցուցած: Կրե՛թէ՛ւ, գուցադ դեռ կէս է մնացած, իսկ
դո՛ւն, Հենդէ՛ւ, տակաւին բան մը չես շինած: Կեցէ՛ք,
տոնեմ գաւազանս որ յոյց տամ ձեզի պէս ծոյլ տղոց
թէ ի՞նչ ըսել է աշխատիլ:

Ձեռքը հակարեց որ գաւազանը վերցնէ, բայց
նայն պահուն կաթով լեցուն փարչը վար ձգեց: Փարչը
կտորեցաւ և մէջի կոթն ալ ամբողջովին թափեցաւ:

— Աւա՛ղ, փարչը կտորեցաւ ու մէջի կաթն
ալ թափեցաւ, բացազանչեց մայրը, հիմա ի՞նչ պիտի
պատրաստեմ ընթրիքի հոմար:

Պատէն կախուած կողով մը վար տոնելով՝ դրաւ
Կրեթէ՛ւի ձեռքերուն մէջ ու ըսաւ.

— Գացէ՛ք անտառ ու ելակ հաւաքեցէ՛ք, և մինչև որ կողովը չլեցնէ՛ք տուն պիտի չլերարդառնաք:

Մանուկները վազեցին դէպ ի անտառ, իսկ խեղճ կինը սկսաւ առանձին լալ: «Ո՛չ հաց ունիմ պահարանին մէջ և ո՛չ ալ կաթ՝ փարչին մէջ: Խեղճ դաւակներուս ուտելու բան մը անգամ չտուի»: Մինչ ինք այդպէս ըսելով կու լար, դուռը բացուեցաւ և ամուսինը ներս մտաւ:

— Վերջապէ՛ս անսթի ու յոգնած տուն հասայ: Ըստ՝ ի՞նչ ունինք ուտելու, հարցուց ամուսինը:

— Ուտելու ոչինչ ունինք, պատասխանեց կինը մտածկոտ:

— Մի՛ յուսահատիր կնի՛կ, բա՛ց կողովս և պիտի տեսնես որ հոն բաւական ուտելիք կայ:

Կինը բացաւ կողովը և, առուգիւ, ինչե՛ր ընես չկար անոր մէջ. միս, ձու, կարագ, խնձոր, գետնախնձոր, չորգամ և ուրիշ բաներ: Ապա՝ ամուսինը սկսաւ մանրամասն պատմել իր այդ օրուան յաջողութեան մասին:

«Բաղաքը ցուցահանդէսի համար պարաստուեթիւն կը տեսնէին. ինկայ փողոցները, մտայ տունէ տուն և սկսայ կանչել. «Աւե՛լ գնեցէ՛ք, սքանչելի՛ աւելներ»: Այս կերպով ամենալիերջին աւելն անգամ ծախեցի: Բայց կեցի՛ր, ո՛ւր են տղաքը:

— Ո՛հ, չեմ գիտեր, բացազանչե՛ս չէ՛ր, այնչափ միայն գիտեմ, որ փարչը կտտրած էր և մէջի կաթն

ալ ամբողջովին թափած:

Հա՛, հա՛, հա՛. ծիծաղեցաւ ամուսինը, դարձեալ չարուեթիւն կ'ընէին չէ՞: Բայց ո՞ւր կը խորհի թէ գացած են հիմա:

Անտառ դրկեցի ելակ հաւաքելու:

— Ի՛նչ, իրիկուան այս պահուն անտա՞ռ դըրկեցիր գանոնք, հոն՝ ուր կախարդ պատաւ մը կը բընակի:

— Կախարդ պատա՞ւ, բացազանգեց կինը, ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ո՛հ, ըսաւ ամուսինը, այս անտառին մէջ կախարդ պատաւ մը կը բնակի որ կէս գիշերին կախարդներու պարահանդէսին կ'երթայ: Աւելներու կոթին վրայ հեծած օդին մէջէն կը թռչին անոնք: Ցերեկ տեսն կախարչը անտառին մէջ կը թափառի և փոքրիկ մանուկներ կը հաւաքէ իր խրճիթին մէջ: Կ'ըսեն թէ շաքարով ու շօքօշայով կը կերակրէ այդ մանուկները, և օր մըն ալ փուռիմը մէջ կը նետէ գանոնք՝ մինչև որ կարկանդակի վերածուին:

— Աւա՛ղ, պատասխանեց կինը, ի՞նչ պիտի ընենք ուրեմն: Այս ըսելով, խօսոյն տունէն դէպ ի անտառ վազեց. իր ետեւէն ալ ամուսինը:

Հենդէլ և Կրեթէլ այդ պահուն անտառին շատ խորերը թափանցած էին: Հենդէլ ելակ կը հաւաքէր, իսկ Կրեթէլ՝ վայրի վարդերով պտակներ կը հիւսէր:

— Օհօ՛, կանչեց Հենդէլ, կողովս արդէն լեց-

ուած է: Մայրիկը միթէ պիտի չուրախանա՞յ երբ գայն տեսնէ:

— Իսկ իմ ծաղկեփունջս ալ պատրաստ է, պատասխանեց Կրեթէլ, ջանալով գայն դնել իր եղբորը գլուխը:

— Ո՛չ, ո՛չ, բառ Զենգել, ազջիկներու միջին կը վայելէ ատիկա: Դուն քու գլխուդ պէտք է դնես: Հիմա անտառին թաղուհին դարձար: Ելակները քեզի պիտի նուիրեմ, բայց ամէնը մի՛ ուտեր:

Ան ծունկի եկաւ քոջը ասջև և ելակով լեցուն կողովը անոր ձեռքերուն մէջ դրաւ: Կրեթէլ խոշոր ելակ մը քնտրեց և Զենգէլի բերանը դրաւ:

— Ծո՛ւտ անուշ էր այդ, բառ Զենգէլ, չիմա կարգը քուկդ է:

— Կարգը նորէն քուկդ է:

Այսպէս ըսելով շարունակեցին ուտել ելակները խնդալով ու զուարճանալով, մինչև որ Զենգէլ միտցածը իր ափին մէջ առաւ ու մէկ անգամէն բերանը լեցուց ու կերաւ:

— Զենգէ՛լ, Զենգէ՛լ, բացողանչեց Կրեթէլ, տե՛ս ի՞նչ ըրիր, ելակները հասցուցիր: Մայրիկը պիտի ծեծէ մեզ երկուքս ալ: Եկուք նորէն ելակ հաւաքենք:

Ոտքի ելան ու սկսան գննել թուփերը, բայց այնքան մի՛նամ էր որ այլեւս կարող չէին ելակները գանաղանել: Դժբախտաբար կորսնցուցած էին նաև

իրենց ճամբան:

Կրեթէլ սկսաւ վախնալ:

— Եայտ՛ Զենգէլ, փոփոսոց ան, ի՞նչ է արդեօք հեռուէն երեւցող տաարկան:

— Ոչի՛նչ, ծառի մը շարցած կոճղն է:

— Բայց, ինչպէ՛ս իր գեմքը կը ծամածո՞ւ, բառ Կրեթէլ:

— Դէմքը կը ծամածո՞ւ նա՞, բառ Զենգէլ, կեցիր ես ալ իրեն ընեմ միեւնոյն բանը:

— Եայտ՛ հոն, ձեռքն ըսպտեր մըն ալ ունի, մեր կողմը կու գայ:

— Կայծոռիկ մըն է որ կը թռչի ասդին անդին, մի՛ վախնար Կրեթէլ: Կեցիր ճայն տամ իրեն: Ձեռքը բերնին չուրջը դրաւ և սկսաւ բարձր ճայնով պոսալ:

— Ո՞վ է հոն:

Արձազանդը ճայն տուաւ «Դուն հոն»:

Ապա Կրեթէլ կանչեց.

— Որ և է մէկը կա՞յ հոն:

Արձազանդը պատասխան տուաւ «Կա՞յ հոն»:

— Լսեցի՞ր, բառ Կրեթէլ, ճայն մը բառ «Հոն»: Ես կը վախնամ, երանի թէ տունը ըլլայինք: Յետոյ սկսաւ լալ: Զենգէլ գրկեց իր քոյրը:

— Մոտս կեցի՞ր Կրեթէլ, ես քեզ կը պաշտպանեմ, բառ ան:

Գորշ մշտն մը սկսաւ բարձրանալ գետնէն և ծածկել նոյն իսկ ծառերը: Մշտնին մէջէն փոքր մարդ

Վը կարծեցին տեսնել տողրակ մը կանակին: Անծա-
նօթը սկսաւ երգել և միեւնոս տտեն աւազ ցանել իր
շուրջը:

“Կը փակեմ մանկանց աչերը, շշ:”

Կը պաշտպանեմ քնած մանուկները, շշ:”

Ես շատ կը սիրեմ զանոնք, շշ:”

Եւ սիրով պաշտ պան կը կենամ անոնց, շշ:”

Աւագով լեցուն տուրսով

Կը կենամ իւրաքանչիւր մանկան քով,

Մինչեւ որ անոնք խոր քուն մտնեն:

Անուշ տղաք քնացեք:”

Արդէն իսկ Հենդէլ և Կրեթէլ ինկեր էին փա-
փուկ խտտերուն վրայ և քնացեր: Մինչ անոնք կը
քնանային՝ պարիկներ եկան շրջանակ մը կաղմեցին ա-
նոնց շուրջը, զանոնք վտանգէ պաշտպանելու համար:

Երբ արեւը սկսաւ փայլիլ ծառերու ձիւղերուն
մէջէն, պարիկները անհետացան: Յօղ իր ընկը զան-
գակածաղիկէն մի քանի ցօղեր առաւ և կաթեցուց
քնացող մանուկներուն աչքերուն վրայ և սկսաւ երգել:

“Յերեկուան ոսկի լոյսով

Սեւ գիշերն կը հալածեմ:

Յօղերս հոս-հոն ցանկով

Լեռ, դաշտ կ'արքնցնեմ:

Անուշ տղաք՝ արքնցեք:”

Կրեթէլ բացաւ իր աչքերը և ըսաւ.

— Ո՛ւր եմ ես, ի՞նչպէս եկայ հոս: Ծառերուն
վրայ թռչուններու երգը կը լսեմ: Հե՛նդէլ արթնցի՛ր.
ականջ դիր թռչուններու երգին:

Հենդէլ պատկած տեղէն վեր ցատկեց:

— Այո՛, ըսաւ ան, առտու է: Երբեք այսքա՛ն
անուշ չէի քնացած:

— Իսկ ե՞ս, յարեց Կրեթէլ, սքանչելի՛ երազ
մը տեսայ: Երազիս մէջ պարիկներ շրջանակ մը կաղ-
մած էին մեր շուրջը, մեզ վտանգէ պաշտպանելու հա-
մար:

Երկու մանուկները սօքի ելան և սկսան իրենց
շուրջը դիտել: Ծառերը անհետացած էին, իսկ իրենց
մօտը փոքրիկ տնակ մը կանգնած էր որ կը փայլէր
արեւուն տակ: Աչքերնին լայն բացին երկուքն ալ:
Պատերը շքալատէ շինուած էին, տանիքը կարկան-
դակէ, պատուհանները շաքարէ, իսկ ցանկապատն ալ
փայլցրած խմորեղէնէ շինուած էին:

— Միթէ տակաւին կ'երազե՞մ, ըսաւ Կրեթէլ,
տախտ մոզական զղեակ մը ըլլալու է:

Չայն-ձուն չկայ, ըսաւ Հենդէլ: Եկուր ներս
մտնենք:

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Կրեթէլ, չես գի-
տեր ու՛քեր կը բնակին այս գեղեցիկ տնակին մէջ:

— Վատն եմ որ շատ համեզ բաներէ շինուած
է ան, ըսաւ Հենդէլ: Եկուր մուկերու նման մի քանի
կտոր ծամենք:

Չեռք ձեռքի բռնած և իրենց ոտքի մատներուն վրայ կոխելով մանուկները մօտեցան տնակին: Հենդէլ տանիքէն կառք մը փրցուց և երկուքը միատին սկսան ուտել: Յանկարծ տնակին մէջէն ձայն մը լսուեցաւ:

«Ծամկ', ծամկ', իմ մկնիկ:

Ո՞վ կը ծամե իմ տնակ,

Ո՞վ կը ծամե իմ տնակ:

Հենդէլ ձեռքէն վար ձգեց կարկանդակը:

— Ո՞ն, լսեցի՞ր, հարցուց քրոջը:

— Հովն էր այլ, պատասխանեց Կրեթէլ և ուրիշ կտոր մը ևս փրցուց:

Ո՞ն, ի՞նչ անուշ է, Հենդէլ, կտոր մը ևս փրցուցուր, ըսաւ Կրեթէլ: Գարձեալ լսուեցաւ նոյն ձայնը:

Ծամկ', ծամկ', իմ մկնիկ,

Ո՞վ կը ծամե իմ տնակ,

Ո՞վ կը ծամե իմ տնակ:

— Հովն է, ուրիշ չի՞նչ, ըսաւ Հենդէլ և պատէն խոչոր կտոր մը փրցնելով երկու մանուկները ախորժակով կերան:

Խրճիթին գոնակը յամբօքէն բացուեցաւ և սգեղ կախարդ կին մը դուրս ելաւ անկից, բայց մանուկները չտեսան զինք: Հանդարտ՝ պտուաւր տնոնց մօտեցաւ և յանկարծ ձեռքերը դրաւ Հենդէլի ուսին:

Թո՞ղ զիս, պտուաւց Հենդէլ, ըսէ ո՞վ ես ուն տակ կին:

Կախարդը երկու թեւերով գրկեց մանուկները:

— Ինծի այցելու թեան եկաք չէ՞, որքա՞ն ազնիւ էք: Եկէք տնակս տանիմ ձեզ՝ որպէս զի ձեր ուղածին չափ առատ չորտաւ, կարկանդակ ու պտուղներ տամ ուտելու համար:

— Ես չեմ գար քեզի հետ, պատասխանեց Հենդէլ: Կրեթէլ զայն մտիկ մի ընէր, եկուր փախչինք: Մանուկները ուժգին թափով մը ինքզինքնին ազատեցին վճուկին ձեռքէն և սկսան վազել: Բայց վճուկը վերցուց ձեռքի գաւազանը և պտուաւց:

— Կանգ առէ՛ք:

Մանուկները հմայուած՝ կեցած տեղերնին անշարժ մնացին: Վճուկը բռնեց Հենդէլի թեւէն և տարաւ վանդակի մը մէջ բանտարկեց:

— Քեզի կաղինով ու չամիչով պիտի կերակրեմ, ըսաւ վճուկը, մինչև որ լաւ մը գիրնաս: Շուտով պիտի հասկնաս ըուն նպատակս: Այս ըսելով՝ Հենդէլի առջևը դրաւ ուտելիքով լեցուն կտոր մը: Կրեթէլը սակայն տան մէջ ազատ ձգեց:

— Եկո՛ւր անուշիկս, ըսաւ պտուաւր Կրեթէլին, պատրաստէ՛ սեղանը, զիր պնակները, պատառաքաղներն ու դանակները: Ամէն ինչ կարգ ու կանոնով չարէ՛, որովհետև այսօր փառաւոր ճաշ մը պիտի ընեմ:

Մինչ Կրեթէլ սեղանը կը յարդարէր, վճուկը դուրս ելաւ փուռին մէջ կրակ վառելու համար: Աչխատելու ատեն կ'երգէր անիկա.

«Իմ անուշի՜կ Կրեթի,
Որքա՛ն կ'ուզեմ քեզ ուտել:
Երբ ան փուռին մեջ նայի
Վհուկը ետևը պիտի կայնի:
Փոքրիկ հեոց մը - քրա՛խկ,
Գոց է դռնակը - չրա՛խկ:
Փուռեկն զինք դուրս հանելու
Երբ որ ժամանակը գայ,
Կարկանդակ մը ուտելու
Արդե՛ն եղած պիտ ըլլայ»:

Կրակը հեազճեատ սխառ ճարճատիւ, իսկ վը-
հուկը աւելի մը կոթին հեծած, սխառ կրակին վրայ
թռչաիւ: Կանգ առաւ Հենդէլի վանդակին առջև և
ըսաւ.

— Իմ փոքրիկ մանկիկս, ցոյց տո՛ւր քու փոք-
րիկ մատիկդ:

Հենդէլ փոխանակ մատը դուրս հանելու ոսկորի
կտոր մը դուրս հանեց: Վհուկը շօշափեց զայն ու ըսաւ.

— Ո՛հ, տակաւին որքա՛ն նիւար ես: Կրեթէլ
չամիչ ու կաղին բեր Հենդէլին որ ուտէ:

Մինչ վհուկը ցնծութեամբ հոս հոն կը պտտէր,
ձեռքէն վար ձգեց իր մոգական գաւազանը: Կրեթէլ
զայն գետնէն վերցուց բայց վհուկը չտեսաւ: Տգեղ ա-
րարածը մօտենալով փուռին դուռը լայն բացաւ:

— Եկո՛ւր ազջիկս, Կրեթէլ, նայէ ներս, տես

թէ կարկանդակները պատրա՞ստ են, ըսաւ վհուկը:

Կրեթէլ գլուխը ցնցելով ըսաւ. «չեմ գիտեր թէ
ի՞նչպէս պէտք եմ ընել»:

— Ոտքիդ մատներուն վրայ կեցի՛ր, ըսաւ վը-
հուկը և գլուխդ դէպ ի առաջ ծռէ:

— Այնքան անմխտ եմ, որ չեմ կրնար հաս-
կնալ բացառածդ, պատասխանեց Կրեթէլ, դուն ան-
գամ մը ըրէ որ տեսնեմ:

Վհուկը ամբողջ մարմնով փուռին մէջ ծռեցաւ:
Կրեթէլ շարժեց մոգական գաւազանը և երբօրը վան-
դակին դուռը բացուեցաւ: Երկուքը միասին վհուկը
հրեցին փուռին մէջ և սկսան քա՛հ, քա՛հ խնդալ ու
ծաղրել պառաւը՝ երգելով.

«Փոքրիկ հեոց մը - քրա՛խկ.

Գոցէ դռնակը - չրա՛խկ:

Փուռեկն զինք դուրս հանելու

Երբ որ ժամանակը գայ,

Կարկանդակ մը ուտելու

Արդե՛ն եղած պիտի ըլլայ»:

Հենդէլ և Կրեթէլ իրարու գերկ նետուեցան և
ուրախութեամբ սկսան պարել ու երգել: Ապա՝ Հենդէլ
բարձրացաւ տան առաստաղը և անկէ կրցածին չափ
չաա խնձոր, կաղին ու չամիչ վար թափեց, մինչ Կրե-
թէլ իր գոգնոցին մէջ կը լեցնէր զանոնք:

Յանձարձ ուրախութեան աղաղակ մը բարձրա-

ցաւ դուրսէն և ներս վազեցին իրենց ծնողքը: Նախ մէկիկ մէկիկ, ապա միասին սկսան գրկել ու համբուրել իրենց զաւակները և ուրախութենէն սկսան թէ' լալ և թէ' խնդալ:

Մինչ Հենդէլ և Կրեթէլ կը պատմէին իրենց գլխէն անցածները, մոգական փուռը ճեղքուեցաւ և մէջէն ինկաւ՝ կարկանդակի վերածուած վհուկին տգեղ մարմինը:

— Վերջապէ՛ս, բացազանչեց հայրը, վհուկը իր լաքած թակարդին մէջ ինկաւ: Ա՛լ ասկից վերջ մանուկները կրնան ապահով խաղալ անտառին մէջ:

Յետոյ բոլորը միասին ուրախ զուարթ սկսան ծափ զարնել, երգել ու պարել:



ՀՀ Ազգային գրադարան
NL0224773

1392

ԱՊՍՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Agop Marachlian

8. rue Emile de Laveleye

Plovdiv—Bulgarie

ԳԻՆ՝ Պուլկարիա 3 Կէլա

Արտասահման 1 ֆրանս. ֆր.

1392